Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 16-11-2023 թ. որոշմամբ
««ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԳՅՈՒԼԲԵԿՅԱՆ 31-20 31շ. բն.20
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00384
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2000-10-13
1.5 ՀՎՀՀ-ն		00064024
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99001662
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.sbsbf.am
1.8 Էլեկտրոնային փոստը		office@sbsbf.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Մարինե Մկրտչյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	4	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	«Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների հիմնում Լոռու, Սյունիքի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի 15 բնակավայրերում	36,643,428

Digitally signed by
ARAM SARGSYAN 3708800605
Date: 2023.11.30 23:51:59

	«Վաղ մանկության խնդիրներ» միջազգային ամսագրում տպագրված և հայերեն լեզվով թարգմանված հոդվածների տարածում և քննարկում	1,951,563
	Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստում	4,534,581
	Բանկային ավանդի տոկոս	433,268
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների հիմնում Լոռու, Սյունիքի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի 15 բնակավայրերում	45,636,414	
«Վաղ մանկության խնդիրներ» միջազգային ամսագրում տպագրված և հայերեն լեզվով թարգմանված հոդվածների տարածում և քննարկում	2,075,902	
Հիմնադրամի կարողությունների զարգացում, ենթակառուցվածքների պահպանում	612,070	
Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստում	580,056	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	51,909,432	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	48,904,442	

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____28____էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2023

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9
2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել *«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» բարեգործական հիմնադրամի* (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որը ներառում է 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության *«Վերապահումով կարծիքի հիմք»* բաժնում նկարագրված հարցի ազդեցության, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում *«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» բարեգործական հիմնադրամի* 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ-ին) համապատասխան:

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք նշանակվել ենք Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձ 2022 թվականի դեկտեմբերի 31-ից հետո՝ 2023 թվականի մարտի 10-ին և այդ պատճառով հնարավորություն չենք ունեցել մասնակցել պաշարների գույքագրմանը և դիտել այդ գործընթացը: Մենք իրատեսական հնարավորություն չենք ունեցել կիրառել այլընտրանքային որևէ աուդիտորական ընթացակարգ՝ ողջամտորեն համոզվելու պաշարների՝ տարեվերջի ու տարեսկզբի դրությամբ ֆիզիկական առկայության վերաբերյալ: Մենք անկարող էինք որոշել և գնահատել չգույքագրված պաշարների հնարավոր ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

ՀՀ, 0001, Երևան, Սայաթ-Նովայի պ. 33շ., բն. 29, հեռ՝ tel: тел: +374 12 58 19 58,
RA, 0001, Yerevan, Sayat-Nova Av. 33, apt. 29, էլ. փոստ՝ e-mail: эл. почта: info@kmg.am,
РА, 0001, Ереван, пр. Саят-Нова, д. 33, кв. 29 կայք՝ web: сайт: www.kmg.am

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որն այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022 թվականի մայիսի 14-ին թվագրված անկախ աուդիտորի եզրակացությունում արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ու ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, դադարեցնել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումներ կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև.

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, այդ ռիսկերին արձագանքելու նպատակով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ,

որոնք բավարար ու համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված այնպիսի դեպքերի կամ հանգամանքների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են պատճառ հանդիսանալ, որ Հիմնադրամը դադարեցնի անընդատության հիմունքի կիրառումը, և այդպիսով այլևս չհամարվի անընդհատ գործող:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու դեպքերն այնպես, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացած աուդիտի իրականացման պատասխանատու ղեկավարն է՝

Տարոն Վարազդատյան

Տնօրեն

«ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ

ՀՀ, 0001, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող. 33/2, բն. 29

01 նոյեմբերի 2023թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծնթ.	31.12.2022թ.	31.12.2021թ. (Վերաներ-կայացված)	01.01.2021թ. (Վերաներ-կայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	5	4,813	5,420	6,370
Ոչ նյութական ակտիվներ		79	138	201
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**4,892**	**5,558**	**6,571**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	6	18,542	18,938	22,997
Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ	7	3,828	1,139	2,031
Բանկային ավանդներ	8	7,683	10,250	14,958
Դրամական միջոցներ	9	5,430	8,057	10,829
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**35,483**	**38,384**	**50,815**
Ընդամենը ակտիվներ		**40,375**	**43,942**	**57,386**
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական գործունեության նպատակով հիմնադրի սկզբնական ներդրում		27,971	27,971	27,971
Կուտակված շահույթ		2,998	4,876	9,236
Ընդամենը սեփական կապիտալ		**30,969**	**32,847**	**37,207**
Ընթացիկ պարտավորություններ				
Ստացված փոխառություններ	11	2,050	-	-
Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ	13	6,224	78	144
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	-	9,715	18,455
Աշխատակիցների վաստակած և չօգտագործած արձակուրդային վճարների գծով պահուստներ	12	1,132	1,302	1,580
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**9,406**	**11,095**	**20,179**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**40,375**	**43,942**	**57,386**

Գործադիր տնօրեն

Մարինե Մկրտչյան

Գլխավոր հաշվապահ՝
«ԷՅՉԷՍ ԸՔԱՌԻՆԹ» ՍՊԸ
Լիազոր ներկայացուցիչ

Արամ Սարգսյան

01 սեպտեմբերի 2023թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մաս կազմող՝ 10-ից 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծնթ.	2022թ.	2021թ. (Վերանայված)
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	10	48,653	61,448
Հասույթ	14	7,585	11
Ներդրված ավանդի գծով տոկոսների ստացումից եկամուտ		410	786
Այլ եկամուտներ		6	-
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր		(15,502)	(15,462)
Այլ աշխատանքի (քաղաքացիաիրավական բնույթի) վարձատրություն		(8,980)	(22,367)
Վերապատրաստման նյութական ծախսեր (ուսումնա-խաղային նյութեր, գրքեր և ձեռնարկներ)		(15,927)	(12,564)
Վերապատրաստման այլ ծախսեր (առավելապես՝ հյուրանոցային ծառայություններ և կեցության վճարներ)		(5,552)	(5,068)
Տրանսպորտային ծախսեր		(3,539)	(2,600)
Վառելիքի գծով ծախսեր		(2,251)	(1,428)
Գործուղման ծախսեր		(661)	(727)
Մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսեր		(3,725)	(3,965)
Գրասենյակային, կոմունալ և կապի ծախսեր		(998)	(1,060)
Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա		(735)	(1,013)
Այլ ծախսեր		(512)	(312)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ կորուստ		(150)	(39)
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**(1,878)**	**(4,360)**
Շահութահարկի գծով ծախս		-	-
Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**(1,878)**	**(4,360)**

Գործադիր տնօրեն

Մարինե Մկրտչյան

Գլխավոր հաշվապահ՝
«ԷՅՉԷՍ ԸՔԱՈՒՆԹ» ՍՊԸ
լիազոր ներկայացուցիչ
Արամ Սարգսյան

01 նոյեմբերի 2023թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մաս կազմող՝ 10-ից 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական գործունեության նպատակով հիմնադրի սկզբնական ներդրում	Կուտակված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 01 հունվարի 2021թ. (Վերաներկայացված)	27,971	9,236	37,207
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(4,360)	(4,360)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2021թ. (Վերաներկայացված)	27,971	4,876	32,847

Հազար դրամ	Կանոնադրական գործունեության նպատակով հիմնադրի սկզբնական ներդրում	Կուտակված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 01 հունվարի 2022թ. (Վերաներկայացված)	27,971	4,876	32,847
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(1,878)	(1,878)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	27,971	2,998	30,969

Գործադիր տնօրեն

Մարինե Մկրտչյան

01 մայիսի 2023թ.

Գլխավոր հաշվապահ՝
«ԷՅՉԷՍ ԸՔԱՈՒՆԹ» ՍՊԸ
լիազոր ներկայացուցիչ
Արամ Սարգսյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մաս կազմող՝ 10-ից 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհներից մուտքեր	38,595	52,708
Մատուցված ծառայությունների և վաճառված ապրանքների գծով մուտքեր	5,389	11
Վճարումներ մատակարարներին (ներառյալ՝ քաղաքացիա-իրավական բնույթի ծառայությունների գծով) և նրանց անունից	(34,682)	(44,512)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(15,494)	(15,764)
Վճարված հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	-	(40)
Վճարված շահութահարկ	-	-
Այլ վճարումներ	(1240)	(682)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(7,432)**	**(8,279)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով ելքեր	(69)	-
Ներդրված ավանդի մասնակի մարումից մուտքեր	2,973	5,500
Ներդրված ավանդի գծով տոկոսների ստացումից մուտքեր	-	46
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**2,904**	**5,546**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Փոխառությունների ստացումից մուտքեր	2,050	2,000
Փոխառությունների մարումից ելքեր	-	(2,000)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**2,050**	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(2,478)**	**(2,733)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	(149)	(39)
Դրամական միջոցների մնացորդն առ 01 հունվարի	**8,057**	**10,829**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**5,430**	**8,057**

Գործադիր տնօրեն

Մարինե Մկրտչյան

Գլխավոր հաշվապահ՝
«ԷՅՉԷՍ ԸՔԱՈՒՆԹ» ՍՊԸ
լիազոր ներկայացուցիչ
Արամ Սարգսյան

01 դեկտեմբերի 2023թ.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մաս կազմող՝ 10-ից 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ:

2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

ա) Հիմնադրամի մասին

«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական և այլ հանրօգուտ նպատակներ:

Հիմնադրամի հիմնադիրն է «Բաց Հասարակության Ինստիտուտ» շահույթ չհետապնդող կազմակերպությունը՝ գրանցված ԱՄՆ, Նյու Յորք, 10019, 400 Ուեսթ 59-րդ փողոց հասցեում: Հիմնադրամի գործունեության սկզբնական միջոցներն են հիմնադրի կողմից ստեղծման պահին Հիմնադրամին փոխանցված գույքը, որի սկզբնական արժեքը կազմել է 27,971,122 ՀՀ դրամ:

Հիմնադրամը պետական գրանցում է ստացել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2004 թվականի սեպտեմբերի 17-ին և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով ու իր կանոնադրությամբ:

Հիմնադրամի նոր խմբագրությամբ կանոնադրությունը Հիմնադրամի հոգաբարձուների Խորհրդի կողմից հաստատվել է 2022 թվականի դեկտեմբերի 12-ին կայացած նիստի որոշմամբ, որը պետական գրանցում է ստացել հաշվետու ժամանակաշրջանից հետո՝ 2023 թվականի հունվարի 10-ին: Նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության որոշ առանցքային դրույթներ շարադրված են ստորև.

Հիմնադրամի նպատակներն իրենց բնույթով բացառապես բարեգործական և կրթական են: Հիմնադրամի գլխավոր նպատակն է՝ նպաստել բաց հասարակության զարգացմանը, որտեղ ամբողջ համայնքը օգնում է երեխաներին դրսևորելու իրենց ողջ ներուժը՝ ապահովելով հավասար հնարավորություններ բարձրորակ կրթություն ստանալու համար:

Հիմնադրամը, իր նպատակներին հասնելու համար, օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ինքնուրույնաբար իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- խորհրդատվական գործունեություն կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում,
- վճարովի դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում և իրականացում կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում,
- ցուցահանդես-վաճառքների կազմակերպում և իրականացում կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում,
- գեղարվեստական և այլ գրականության, մանկավարժամեթոդական և այլ ձեռնարկների հրատարակում և վաճառք,
- շուկայի իրավիճակի հետազոտություն և հասարակական կարծիքի ուսումնասիրում կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում, գովազդի տարածման հետ կապված գործունեություն,
- գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ կրթության, մշակույթի և գիտության բնագավառներում,
- ցանկացած տիպի նկարչական, քանդակագործական և կիրառական բնույթի աշխատանքների կատարում և վաճառք,
- մանկապարտեզների, դպրոցների, կրթահամալիրների հիմնում և կրթական գործունեության իրականացում այդ հաստատություններում,

- մանկապարտեզների, դպրոցների կրթահամալիրների և այլ նմանատիպ շինությունների վերանորոգման աշխատանքների կազմակերպում:

Հիմնադրամի

Լրիվ անվանումը՝	«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» բարեգործական հիմնադրամ
Պետական գրանցման համարը՝	222.160.00384
Պետական գրանցման ամսաթիվը՝	17.09.2004թ.
Գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝	ՀՀ, 0033, ք. Երևան, Գյուլբենկյան 31շ., բն. 20
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	00064024

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Հիմնադրամի մարմիններն են.

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը.
- Հիմնադրամի գործադիր տնօրենը:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի գործադիր տնօրենը:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 5 (հինգ) անդամից: Խորհրդի գործող կազմը ներկայացված է ստորև.

- Հեղինե Խաչատրյան – Խորհրդի նախագահ (2022թ. մարտի 5-ից)
- Հրաչիկ Հակոբջանյան – Խորհրդի անդամ (2022թ. մարտի 5-ից)
- Արամային Փաշինյան – Խորհրդի անդամ (2022թ. մարտի 5-ից)
- Իգոր Կարապետյան – Խորհրդի անդամ (2022թ. մարտի 5-ից)
- Ալինա Մանուկյան – Խորհրդի անդամ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, մինչև Խորհրդի գործող կազմի հաստատումը, Խորհուրդը գործել է հետևյալ կազմով.

- Արտաշես Թորոսյան – Խորհրդի նախագահ (մինչև 2022թ. մարտի 5-ը)
- Սերոբ Խաչատրյան – Խորհրդի անդամ (մինչև 2022թ. մարտի 5-ը)
- Լուիզա Միլիտոսյան – Խորհրդի անդամ (մինչև 2022թ. մարտի 5-ը)
- Անուշ Շահվերդյան – Խորհրդի անդամ (մինչև 2022թ. մարտի 5-ը)
- Ալինա Մանուկյան – Խորհրդի անդամ

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ Հիմնադրամի աշխատակիցների ցուցակային թվաքանակը եղել է 4 հոգի (31.12.2021թ.՝ 4 հոգի):

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1. Հայտարարություն համապատասխանության մասին

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի հրապարակած և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան:

2.2. Չափման հիմունքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքի հիմունքով:

2.3. Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4. Ստորագրումը

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2023 թվականի նոյեմբերի 1-ին Հիմնադրամի գործադիր տնօրեն Մարինե Մկրտչյանի և Հիմնադրամի գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող՝ «ԷՅՉԷՍ ԸՔԱՌԻՆԹ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ Արամ Սարգսյանի կողմից:

2.5. Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են՝ ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն կամ դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք չկա:

2.6. Նախորդ ժամանակաշրջանում ՓՄԿ ՖՀՄՄ-ին անցման սխալներ և վերադասակարգումներ

Հիմնադրամը նախորդ հաշվետու ժամանակաշրջանում ամբողջական ՖՀՄՄ-ներից առաջին անգամ անցում է կատարել ՓՄԿ ՖՀՄՄ-ին և 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է ՓՄԿ ՖՀՄՄ-ին համապատասխան: Ամբողջական ՖՀՄՄ-ներից անցումը ՓՄԿ ՖՀՄՄ-ին ազդեցություն է թողել նախորդ տարվա վերջի և սկզբի (ամենավաղ համադրելի ամսաթվի) դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների և նախորդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա, որոնք նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, հաշվի չեն առնվել: Ամբողջական ՖՀՄՄ-ներից ՓՄԿ ՖՀՄՄ-ին անցմամբ պայմանավորված, անցման ամսաթվի դրությամբ (01.01.2021թ.) և նախորդ տարեվերջի դրությամբ (31.12.2021թ.) առկա, ինչպես նաև 2021 թվականի ընթացքում առաջացած սխալների ուղղման ու վերադասակարգման դեպքերի ազդեցության արտացոլման նպատակով Հիմնադրամի 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները վերաներկայացվել են: Համեմատական ֆինանսական տեղեկատվության վերաներկայացումը նկարագրված ու ներկայացված է ստորև.

Նախորդ ժամանակաշրջանների հիմնական սխալների և վերադասակարգման դեպքերի նկարագրությունը.

1. Հիմնադրամը հայտնաբերել է, որ անցման ամսաթվի դրությամբ ակտիվներին և եկամուտներին վերաբերող շնորհները և դրանցից ճանաչված եկամուտները հաշվառվել են՝ համաձայն ամբողջական ՖՀՄՄ-ների պահանջների՝ հաշվի չառնելով ՓՄԿ ՖՀՄՄ-ի՝ շնորհներից եկամտի ճանաչմանը ներկայացվող պահանջները: Ըստ այդմ, ՓՄԿ ՖՀՄՄ-ի կիրառման պայմաններում, շնորհներին կից պայմանների ամբողջական կատարման բավարարման դեպքում դրանցից եկամուտը ճանաչվում է անմիջապես հենց այդ նույն ժամանակաշրջանում՝ անկախ շնորհային միջոցները հետագա օգտագործելու կամ սպառելու ժամանակաշրջաններից: Նշված սխալն ազդեցություն է թողել անցման ամսաթվի և նախորդ տարեվերջի դրությամբ կուտակված շահույթի մնացորդի, ինչպես նաև նախորդ տարվա շահույթ/վնաս-ի ցուցանիշի վրա: Սույն ֆինանսական հաշվետվություններում այդ սխալն ուղղվել է:

2. Հիմնադրամը կարճաժամկետ բանկային ավանդները նախորդ հաշվետու ժամանակաշրջանում ներկայացրել է դրամական միջոցների համարժեքների կազմում: Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ըստ էության, այդ բանկային ավանդները պահվում են որպես ներդրում և դրանից եկամուտներ ստանալու նպատակով՝ երեք ամսից ավելի ժամկետով (սովորաբար՝ մինչև վեց ամիս կամ մինչև մեկ տարի) և նախատեսված չեն Հիմնադրամի կարճաժամկետ դրամական պարտավորվածությունները բավարարելու նպատակով: Սույն ֆինանսական հաշվետվություններում բանկային ավանդները վերադասակարգվել են և ներկայացվել դրամական միջոցների համարժեքներից առանձին:

   Վերադասակարգման այդ դեպքն ազդեցություն է թողել նաև 2021 թվականի դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության վրա՝ համապատասխանաբար ավելացնելով դրամական միջոցների սկզբնական և վերջնական մնացորդները, ինչպես նաև «Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր»-ի վրա՝ բանկային ավանդների գծով դրամական շարժն արտացոլելով «Ներդրված ավանդի մասնակի մարումից մուտքեր» և «Ներդրված ավանդի գծով տոկոսների ստացումից մուտքեր» առանձին տողային հոդվածներում:

3. Մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսերը 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվել են «Այլ ծախսեր»-ի կազմում: Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ծախսային այս ուղղությունը Հիմնադրամի համար ունի էական բնույթ, և դրա առանձնացումը կապահովի առավել ճշգրիտ ներկայացում: Սույն ֆինանսական հաշվետվություններում մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսերն առանձնացվել են և վերաներկայացվել «Այլ ծախսեր»-ի կազմից առանձին:

4. Վերապատրաստման շրջանակներում կատարված նյութական ծախսերը 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվել են երկու առանձին տողային հոդվածներով՝ վերապատրաստման նյութական ծախսեր (բացի՝ գրքերից և ձեռնարկներից) ու գրքեր և ձեռնարկներ: Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ վերապատրաստման ընդհանուր նյութական ծախսերը մեկ ծախսային հոդվածում ներառելն ապահովում է առավել ճշգրիտ ներկայացում նաև ընդհանուր օգտագործված պաշարների չափի արտացոլման նպատակով, քանզի գրքերից և ձեռնարկներից բացի, այդ ծախսերում ներառված են նաև ուսումնախաղային նյութերը: Սույն ֆինանսական հաշվետվություններում բոլոր այդ ծախսերը միավորվել և ներառվել են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Վերապատրաստման նյութական ծախսեր (ուսումնախաղային նյութեր, գրքեր և ձեռնարկներ)» տողային հոդվածում:

2022 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ՓՄԿ ՖՀՄՍ-ին անցման սխալների ուղղման և վերադասակարգումների ազդեցության պատկերումը 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերջի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա, բերված է ստորև.

Հազար դրամ	31.12.2021թ. (Վերանայված)	ՓՄԿ ՖՀՄՍ-ին անցման սխալի ազդեցությունը	Վերադասակարգման ազդեցությունը	31.12.2021թ. (Նախկինում ներկայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	5,420	-	-	5,420
Ոչ նյութական ակտիվներ	138	-	-	138
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**5,558**	-	-	**5,558**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	18,938	-	-	18,938
Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ	1,139	-	76	1,063
Տրված կանխավճարներ	-	-	(76)	76
Բանկային ավանդներ	10,250	-	10,250	-
Դրամական միջոցներ	8,057	-	(10,250)	18,307
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**38,384**	-	-	**38,384**
Ընդամենը ակտիվներ	**43,942**	-	-	**43,942**
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական գործունեության նպատակով հիմնադրի սկզբնական ներդրում	27,971	-	-	27,971
Կուտակված շահույթ (վնաս)	4,876	10,157	-	(5,281)
Ընդամենը սեփական կապիտալ	**32,847**	**10,157**	-	**22,690**
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ակտիվներին վերաբերող շնորհներ	-	(510)	-	510
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	-	**(510)**	-	**510**
Ընթացիկ պարտավորություններ				
Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ	78	-	-	78
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9,715	(9,647)	-	19,362
Աշխատակիցների վաստակած և չօգտագործած արձակուրդային վճարների գծով պահուստներ	1,302	-	-	1,302
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**11,095**	**(9,647)**	-	**20,742**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**43,942**	-	-	**43,942**

2022 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ՓՄԿ ՖՀՄՍ-ին անցման սխալների ուղղման և վերադասակարգումների ազդեցության պատկերումը 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա, բերված է ստորև.

Հազար դրամ	2021թ. (Վերանայված)	ՓՄԿ ՖՀՄՍ-ին անցման սխալի ազդեցությունը	Վերադասակարգման ազդեցությունը	2021թ. (Նախկինում ներկայացված)
Շնորհներից եկամուտ	61,448	(3,728)	-	65,176
Հասույթ	11	-	11	-
Ներդրված ավանդի գծով տոկոսների ստացումից եկամուտ	786	-	-	786
Այլ եկամուտներ՝ ապրանքների վաճառքից	-	-	(11)	11
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր	(15,462)	-	-	(15,462)
Այլ աշխատանքի (քաղաքացիաիրավական բնույթի) վարձատրություն	(22,367)	-	-	(22,367)
Վերապատրաստման նյութական ծախսեր (ուսումնախաղային նյութեր, գրքեր և ձեռնարկներ)	(12,564)	-	(1,787)	(10,777)
Գրքեր և ձեռնարկներ	-	-	1,787	(1,787)
Վերապատրաստման այլ ծախսեր	(5,068)	-	-	(5,068)
Տրանսպորտային ծախսեր	(2,600)	-	-	(2,600)
Վառելիքի գծով ծախսեր	(1,428)	-	-	(1,428)
Գործուղման ծախսեր	(727)	-	-	(727)
Մասնագիտական ծառայությունների ձեռքբերման ծախսեր	(3,965)	-	(3,965)	-
Գրասենյակային, կոմունալ և կապի ծախսեր	(1,060)	-	-	(1,060)
Ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն և ամորտիզացիա	(1,013)	-	-	(1,013)
Այլ ծախսեր	(312)	-	3,965	(4,277)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ կորուստ	(39)	-	-	(39)
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը	**(4,360)**	**(3,728)**	-	**(632)**
Շահութահարկի գծով ծախս	-	-	-	-
Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**(4,360)**	**(3,728)**	-	**(632)**

2022 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ՓՄԿ ՖՀՄՍ-ին անցման սխալների ուղղման և վերադասակարգումների ազդեցության պատկերումը 2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա սկզբի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա, բերված է ստորև.

Հազար դրամ	01.01.2021թ. (Վերանայված)	ՓՄԿ ՖՀՄՍ-ին անցման սխալի ազդեցությունը	Վերադասակարգման ազդեցությունը	01.01.2021թ. (Նախկինում ներկայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	6,370	-	-	6,370
Ոչ նյութական ակտիվներ	201	-	-	201
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**6,571**	-	-	**6,571**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	22,997	-	-	22,997
Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ	2,031	-	922	1,109
Տրված կանխավճարներ	-	-	(922)	922
Բանկային ավանդներ	14,958	-	14,958	-
Դրամական միջոցներ	10,829	-	(14,958)	25,787
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**50,815**	-	-	**50,815**
Ընդամենը ակտիվներ	**57,386**	-	-	**57,386**
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական գործունեության նպատակով հիմնադրի սկզբնական ներդրում	27,971	-	-	27,971
Կուտակված շահույթ (վնաս)	9,236	13,885	-	(4,649)
Ընդամենը սեփական կապիտալ	**37,207**	**13,885**	-	**23,322**
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ակտիվներին վերաբերող շնորհներ	-	(1,287)	-	1,287
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	-	**(1,287)**	-	**1,287**
Ընթացիկ պարտավորություններ				
Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ	144	-	-	144
Եկամուտներին վերաբերող շնորհներ	18,455	(12,598)	-	31,053
Աշխատակիցների վաստակած և չօգտագործած արձակուրդային վճարների գծով պահուստներ	1,580	-	-	1,580
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**20,179**	**(12,598)**	-	**32,777**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**57,386**	-	-	**57,386**

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և

բ) միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին պետք է չափի իր սկզբնական արժեքով:

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը որոշվում է որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման-վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

• Շենքեր	50 տարի
• Սարքավորումներ	1-6 տարի
• Տրանսպորտային միջոցներ	5-6 տարի
• Արտադրական և տնտեսական գույք	1-6 տարի
• Համակարգչային տեխնիկա	1-5 տարի

3.2. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Հիմնադրամը ճանաչում է գործարքից հասույթը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա (ավարտվածության տոկոսի որոշման մեթոդի համաձայն): Գործարքի արդյունքը կարող է արժանահավատորեն գնահատվել, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Ավարտվածության աստիճանը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ պայմանագրի գծով կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, Հիմնադրամը ճանաչում է հասույթը միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Հիմնադրամը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Հիմնադրամը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Հիմնադրամի հիմնական հասույթը գոյացել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստման վճարովի ծառայությունների մատուցումից:

Հիմնադրամի ստացած դրամաշնորհներն ու նվիրատվությունները (նվիրաբերությունները) չեն դասակարգվում որպես հասույթ:

3.3. Շնորհներ և նվիրատվություններ

Պետական շնորհները Հիմնադրամին ռեսուրսների փոխանցման տեսքով պետության (պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու միջազգային կազմակերպությունների) կողմից տրամադրվող օգնություններ են՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայման-

ներին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Այլ՝ ոչ պետական հաստատություններից, միջազգային և տեղական բարեգործական կազմակերպություններից ստացված շնորհները համանմանության սկզբունքով հաշվառվում են ինչպես պետական շնորհները: Սակայն, եթե ստացված միջոցներին (ռեսուրսներին) կից՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի, կոնկրետ պայմաններ առկա չեն (օրինակ՝ տրամադրվել են Հիմնադրամի ընդհանուր գործառնական, կանոնադրական նպատակներով օգտագործվելու համար), ապա միջոցների այդպիսի ստացումը չի դիտվում որպես շնորհ, այլ դիտվում է որպես նվիրաբերություն կամ նվիրատվություն՝ կախված այլ համապատասխան հանգամանքներից:

Հիմնադրամը պետական շնորհները ճանաչում է հետևյալ կերպ՝

ա) շնորհը, որը Հիմնադրամի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են.

բ) շնորհը, որը Հիմնադրամի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.

գ) ստացված շնորհները, նախքան եկամտի ճանաչման չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես պարտավորություն: Ընդ որում, եթե կից պայմանների բավարարումը նախատեսված է հաշվետու ամսաթվից ավելի քան տասներկու ամիս հետո, ապա շնորհները ներկայացվում են ոչ ընթացիկ պարտավորությունների, իսկ հակառակ դեպքում՝ ընթացիկ պարտավորությունների կազմում:

Հիմնադրամը շնորհները չափում է ստացված կամ ստացվելիք ակտիվի իրական արժեքով:

Նվիրատվությունները և առանց կոնկրետ պայմանների տրված նվիրաբերությունները որպես եկամուտ են ճանաչվում դրանց ստացման պահին:

3.4. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի և հետաձգված հարկի հանրագումարը:

(i) <u>Ընթացիկ հարկ</u>

Ընթացիկ հարկը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկվող շահույթի հիման վրա:

Հիմնադրամն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Հիմնադրամն այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:

Հիմնադրամն ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալում է, որ կվճարի (կփոխհատուցի)՝ կիրառելով հարկի դրույքները և հարկային օրենսդրությունը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

(ii) <u>Հետաձգված հարկ</u>

Հետաձգված հարկը որոշվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև տարբերությունների հիման վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

ա) գուդվիլի սկզբնական ճանաչումից, կամ

բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը՝

բ (i) ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ, և

բ (ii) գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը՝

ա) ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ, և

բ) այդ գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հիմնադրամը հետաձգված հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է՝ կիրառելով հարկի դրույքները և հարկային օրենսդրությունը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

Հիմնադրամի եկամուտների գերակշիռ մասն անհատույց ստացված ակտիվներ են, որոնք շահութահարկի հաշվարկման իմաստով չեն հանդիսանում հարկվող եկամուտ, իսկ դրանց հաշվին կամ դրանց գծով կատարված ծախսերը ենթակա չեն համախառն եկամտից նվազեցման: Այդ և այլ նկատառումներից ելնելով, Հիմնադրամի կողմից հետաձգված հարկեր չեն ճանաչվել:

3.5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, սկզբնապես մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.6. Արտարժութային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
Դրամով	2022թ.	2021թ.	31.12.2022թ.	31.12.2021թ.
1 ԱՄՆ դոլար	435.87	503.81	393.57	480.14
1 Եվրո	461.03	596.65	420.06	542.61

3.7. Պաշարներ

Հիմնադրամը պաշարների կազմում է ճանաչում այն ակտիվները, որոնք՝

ա) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար.

բ) արտադրության ընթացքում են նման վաճառքի համար. կամ

գ) հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.8. Ֆինանսական գործիքներ

(i) <u>Առևտրական դեբիտորական պարտքեր</u>

Առևտրական դեբիտորական պարտքերը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ ստանալու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

Հիմնադրամի կողմից մատուցվող ծառայությունները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով՝ առանց նշանակալի ժամանակահատվածով պարտքի տարաժամկետման հնարավորության: Դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն:

Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ առևտրական դեբիտորական պարտքերի գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորուստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(ii) <u>Առևտրական կրեդիտորական պարտքեր</u>

Առևտրական կրեդիտորական պարտքերը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ վճարելու իրավաբանորեն ամրագրված պարտավորություն:

Առևտրական կրեդիտորական պարտքերը վճարման սովորական պայմանների հիմունքով պարտականություններ են՝ առանց նշանակալի ժամանակահատվածով պարտավորության տարաժամկետ մարման հնարավորության և տոկոսակիր չեն:

(iii) <u>Ավանդներ և փոխառություններ</u>

Ավանդները և փոխառությունները սկզբնապես չափվում են գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները): Սկզբնական չափումից հետո, ավանդները և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

2022 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստորև նշվածների զուտ գումարն է՝

ա) գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին,

բ) հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ,

գ) գումարած կամ հանած սկզբնական ճանաչման գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով,

դ) հանած ֆինանսական ակտիվի արժեզրկման կամ անհավաքագրելիության գծով ցանկացած նվազեցում:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, երբ տեղին է, ավելի կարճ ժամանակաշրջանի համար, գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրտորեն զեղչում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ հաշվեկշռային արժեքի հիման վրա:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի համաձայն՝

ա) ֆինանսական ակտիվի (պարտավորության) ամորտիզացված արժեքն ապագա դրամական մուտքերի (վճարումների) ներկա արժեքն է՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով.

բ) ժամանակաշրջանի տոկոսային ծախսը (եկամուտը) հավասար է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական պարտավորության (ակտիվի) հաշվեկշռային արժեքի և ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքի արտադրյալին:

Արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Հիմնադրամը գնահատում է դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ վաղաժամկետ վճարման, գնման կամ համանման օպցիոններ) և այն հայտնի պարտքային կորուստները, որոնք Հիմնադրամը կրել է, սակայն այն չպետք է հաշվի առնի դեռևս չկրած ապագա պարտքային հնարավոր կորուստները:

Սկզբնական ներդրման պահից երեք ամիսը գերազանցող ժամկետով տեղաբաշխված ֆինանսական ներդրումները, որոնք չեն պահվում Հիմնադրամի կարճաժամկետ դրամական պարտավորվածությունները բավարարելու նպատակով, այլ պահվում են ներդրման կամ այլ նպատակներով, ճանաչվում և հաշվառվում են որպես բանկային ավանդներ՝ դրամական միջոցներից առանձին:

3.9. Պահուստներ

Հիմնադրամը պահուստը ճանաչում է միայն այն դեպքում, երբ՝

ա) հաշվետու ամսաթվի դրությամբ ունի պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ պարտականությունը մարելու համար Հիմնադրամից կպահանջվի փոխանցել տնտեսական օգուտներ.

գ) պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Հիմնադրամը պահուստը չափում է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի լավագույն գնահատականով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որն

2022 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հիմնադրամը խելամտորեն կվճարեր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին երրորդ կողմին փոխանցելու համար:

Հիմնադրամը պահուստը ճանաչում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն և պահուստի գումարը որպես ծախս, բացառությամբ երբ ՓՄԿ ՖՀՄՍ-ի մեկ այլ բաժին պահանջում է ծախսումը ճանաչել որպես որևէ ակտիվի ինքնարժեքի մաս:

Հիմնադրամը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում և ճշգրտում է պահուստները՝ այդ հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու նպատակով: Նախկինում ճանաչված գումարների ցանկացած ճշգրտում ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե պահուստը սկզբնապես ճանաչվել էր որպես ակտիվի արժեքի մաս:

3.10. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների բոլոր այն հատուցումների ծախսումները, որոնց նկատմամբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին ծառայություններ մատուցելու արդյունքում ձեռք են բերել իրավունք, ճանաչվում են՝

ա) որպես պարտավորություն, աշխատակցին ուղղակիորեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե վճարված գումարը գերազանցում է մինչև հաշվետու ամսաթիվը մատուցած ծառայությունից առաջացած պարտականության գումարը, Հիմնադրամն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի.

բ) որպես ծախս, բացառությամբ երբ ՓՄԿ ՖՀՄՍ-ի մեկ այլ բաժնով պահանջվում է, որ ծախսումը ճանաչվի որպես ակտիվի արժեքի մաս:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են՝

i. աշխատավարձը,

ii. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին են վճարովի տարեկան հասանելիք արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության ու մայրության նպաստը,

iii. պարգևավճարները, լրավճարները և այլ հավելումները,

iv. առողջության (բժշկական) ապահովագրությունը:

Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է նրանց հետագա փոխհատուցելի բացակայությունների իրավունքը: Հիմնադրամը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է չզեղչված լրացուցիչ գումարով, որը Հիմնադրամն ակնկալում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքի արդյունքում: Հիմնադրամն այդ գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացնում է որպես ընթացիկ պարտավորություն:

4. Գնահատումներ և դատողություններ

ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Հիմնադրամի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի

վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

Հաշվապահական գնահատումների փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց՝ համապատասխանաբար ճանաչվելով այն հաշվետու ժամանակաշրջանում, որում կատարվել են փոփոխությունները, իսկ փոփոխությունները հաջորդ հաշվետու ժամանակաշրջանների վրա ազդելու դեպքում, ճանաչվում են նաև այդ ժամանակաշրջաններում:

4.1. Ակտիվների արժեզրկումը

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Հիմնադրամը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող արժեքն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի իրական արժեքներից մեծագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում նվազումը բացահայտվել է: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, արժեզրկման պահուստն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

4.2. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Իր սովորական գործունեության ընթացքում Հիմնադրամն իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Հիմնադրամը կիրառում է մասնագիտական դատողություն կապակցված կողմերի բացահայտման ուղղությամբ: Գնահատումն իրականացնելու համար Հիմնադրամը պարբերաբար հետևում է հոգաբարձուների խորհրդի անդամների նշանակալի մասնակցությանն այլ կազմակերպությունների կապիտալում, ինչպես նաև վերլուծում է յուրաքանչյուրի հետ գործարքի ծավալները:

5. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր	Սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական և տնտեսական գույք	Համակարգչային տեխնիկա	Ընդամենը
Արժեք						
Մնացորդ առ 01.01.2021թ.	7,778	2,799	4,320	735	2,203	17,835
Ավելացում	-	-	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2021թ.	**7,778**	**2,799**	**4,320**	**735**	**2,203**	**17,835**
Մնացորդ առ 01.01.2022թ.	7,778	2,799	4,320	735	2,203	17,835
Ավելացում	-	-	-	69	-	69
Մնացորդ առ 31.12.2022թ.	**7,778**	**2,799**	**4,320**	**804**	**2,203**	**17,904**
Մաշվածություն						
Մնացորդ առ 01.01.2021թ.	2,726	2,758	3,090	721	2,170	11,465
Տարվա մաշվածություն	152	41	719	14	24	950
Մնացորդ առ 31.12.2021թ.	**2,878**	**2,799**	**3,809**	**735**	**2,194**	**12,415**
Մնացորդ առ 01.01.2022թ.	2,878	2,799	3,809	735	2,194	12,415
Տարվա մաշվածություն	152	-	511	4	9	676
Մնացորդ առ 31.12.2022թ.	**3,030**	**2,799**	**4,320**	**739**	**2,203**	**13,091**
Հաշվեկշռային արժեք						
Առ 31.12.2021թ.	**4,900**	-	**511**	-	**9**	**5,420**
Առ 31.12.2022թ.	**4,748**	-	-	**65**	-	**4,813**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 10,177 հազար դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,792 հազար դրամ):

31.12.2022թ. դրությամբ Հիմնադրամը չունի հիմնական միջոցների ձեռքբերման գծով որևէ պայմանագրային հանձնառություն (31.12.2021թ.՝ նույնպես չունի):

2022թ. ընթացքում Հիմնադրամը չի հայտնաբերել իր հիմնական միջոցների արժեզրկում:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի հիմնական միջոցների սեփականության իրավունքի սահմանափակումներ առկա չեն:

6. Պաշարներ

Հազար դրամ	Առ 31.12.2022թ.	Առ 31.12.2021թ.
Շնորհային միջոցներով ձեռք բերված ուսումնախաղային նյութեր, գրքեր և ձեռնարկներ	9,621	9,646
Սեփական միջոցներով ձեռք բերված ուսումնախաղային նյութեր, գրքեր և ձեռնարկներ	8,860	9,292
Վառելիք	61	-
Ընդամենը	**18,542**	**18,938**

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված պաշարներ: Պաշարների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ առկա չեն:

Տարվա ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմում է 17,626 հազար դրամ (2021թ.՝ 6,071 հազար դրամ):

Հաշվետու տարվա ընթացքում պաշարների արժեքի նվազում տեղի չի ունեցել:

7. Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ

Հազար դրամ	Առ 31.12.2022թ.	Առ 31.12.2021թ.
Դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով	3,002	-
Կանխավճարներ աշխատավարձի գծով	17	187
Կանխավճարներ հարկերի գծով՝ բացի շահութահարկից	770	870
Տրված այլ կանխավճարներ	31	76
Այլ ակտիվներ	8	6
Ընդամենը	**3,828**	**1,139**

8. Բանկային ավանդներ (Վերաներկայացված)

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ (31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ՝ նույնպես) այս հոդվածում ներառված են ՀՀ դրամով, 5.5 % տարեկան անվանական տոկոսադրույքով և սկզբնական ներդրման պահից երեք ամիսը գերազանցող, սակայն մեկ տարին չգերազանցող ժամկետով ներդրված բանկային ավանդները:

9. Դրամական միջոցներ

Հազար դրամ	Առ 31.12.2022թ.	Առ 31.12.2021թ. (Վերաներկայացված)
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	5,202	7,489
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	228	182
Դրամարկղ	-	386
Ընդամենը	**5,430**	**8,057**

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում առկա չէ:

10. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2022թ.	2021թ. (Վերաներկայացված)
Մնացորդը հունվարի 1-ին	9,715	18,455
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	39,061	52,708

2022 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հազար դրամ	2022թ.	2021թ. (Վերանայված)
Տարվա ընթացքում շահույթում կամ վնասում որպես եկամուտ ճանաչված	(48,653)	(61,448)
Շնորհատուներին վերադարձման ենթակա գումարների ներառում այլ պարտավորությունների կազմում	(123)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	-	9,715

11. Ստացված փոխառություններ

Այս հոդվածում ներառված գումարն իրենից ներկայացնում է տարվա ընթացքում Հիմնադրամի աշխատակցից ՀՀ դրամով անտոկոս ստացված կարճաժամկետ փոխառությունը:

12. Աշխատակիցների վաստակած և չօգտագործած արձակուրդային վճարների գծով պահուստներ

Այս հոդվածում ներկայացված են աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները՝ տարեկան արձակուրդների տեսքով փոխհատուցելի բացակայությունների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով՝ ճշտելով անձնակազմի գծով ծախսումները: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդներն օգտագործելիս: Ձեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական, և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

13. Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ

Հազար դրամ	Առ 31.12.2022թ.	Առ 31.12.2021թ.
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին (առավելապես՝ քաղաքացիաիրավական բնույթի ծառայությունների գծով)	5,190	78
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	95	-
Պարտավորություններ հարկերի և այլ պարտադիր վճարների գծով՝ բացի շահութահարկից	8	-
Շնորհատուներին վերադարձման ենթակա գումարներ	123	-
Ստացված կանխավճարներ	808	-
Ընդամենը	**6,224**	**78**

14. Հասույթ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Ծառայությունների մատուցումից	7,514	-
Ապրանքների (գրքերի) վաճառքից	71	11
Ընդամենը	**7,585**	**11**

15. Կապակցված կողմերի հետ գործարքներ

15.1. Վերահսկողության փոխհարաբերություն

Հիմնադրամը որևէ կազմակերպության կողմից չի վերահսկվում: Հիմնադրամի ղեկավարման բարձրագույն մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է, որի կազմը ներկայացված է Ծանոթ. 1-ում:

15.2. Ղեկավարության հատուցումները

Հիմնադրամի առանցքային անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Աշխատակիցների հատուցումներ	5,308	5,372

16. Պայմանական դեպքեր

16.1. Ապահովագրություն

Հիմնադրամն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր դեպքերի արդյունքում առաջացող վնասների հետ: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ապահովագրական պաշտպանության միջոցներ ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է նշանակալիորեն բացասական ազդեցություն թողնել Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի ու ֆինանսական արդյունքների վրա:

16.2. Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում բնորոշվում է օրենսդրական պարբերաբար փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ առնվազն տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Հիմնադրամի հարկային հաշվարկները, հաշվետվություններն ու հայտարարագրերը և իրավունք ունեն առաջադրելու լրացուցիչ հարկային պարտավորություններ, ինչպես նաև նշանակելու տույժեր ու տուգանքներ:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե հարկային մարմինները կարողանան հիմնավորել ու պարտադրել իրենց մեկնաբանություններն ու տեսակետները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

16.3. Դատական գործեր

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ և մինչև ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում Հիմնադրամի դեմ ներկայացված դատական հայցեր չեն եղել:

16.4. Երաշխավորություններ

31 դեկտեմբերի 2022թ. դրությամբ Հիմնադրամը տրամադրած երաշխավորություններ չի ունեցել:

17. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում տեղի չեն ունեցել այնպիսի էական դեպքեր, որոնց գծով ֆինանսական հաշվետվություններում պետք է կատարվեին ճշգրտումներ կամ լրացուցիչ բացահայտումներ:

Գործադիր տնօրեն		Գլխավոր հաշվապահ՝
		«ԷՅՉԷՍ ԸՔԱՌԻՆԹ» ՍՊԸ
		լիազոր ներկայացուցիչ
Մարինե Մկրտչյան		Արամ Սարգսյան

01 դեկտեմբերի 2023թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.11.2023 23:45